ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՌԱՖՖԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Աշխարհահռչակ դաշնակահար Ռաֆֆի Պետրոսյանը Մայր Հայրենիք էր ժամանել Վեհափառ Հայրապետի գովելի նախաձեռնությամբ և հրավերով։ Հայրենիք ժամանելուց հետո տաղանդավոր արվեստագետը իր համերգների նախօրյակին և թե այլ առիթներով հաճախ եղավ Վեհափառ Հայրապետի մոտ։ Այս այցելությունները միշտ էլ անցնում էին ջերմ ու խանդավառ մթնոլորտում և սրտագին զրույցներով։ Առանձնապես հիշատակության արժանի է Վեհարանում տեղի ունեցած նոյեմբերի 21-ի հանդիպումը։ Այդ հանդիպման ներկա էին դաշնակահարի հարգելի տիկինը, ծերունազարդ տատիկը (հանգուցյալ ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի այրին), ականավոր հայ երգահաններ Աշոտ Սաթյանը, Արնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը և ուրիշներ։ Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը մտերմիկ խոսակցություններ և զրույցներ ունեցավ մեծանուն արվեստագետների հետ, ընդհանրապես երաժշտական աշխարհի և հայ երաժշտության, և մասնավորապես հայ եկեղեցական երաժշտության վերաբերյալ։ Երաժշտական զրույցի ժամանակ բոլոր արվեստագետներն էլ նշեցին մեր եկեղեցական երգերի վեհությունը և բարձր արվեստը։ Առանձնապես հուզիչ էր լսել Ռ. Պետրոսյանի շնորհակալական խոսքը ուղղված Վեհափառ Հայրապետի իրեն շնորհած Մայր Հայրենիքում հանդես գալու երջանիկ պատեհության համար։ Տաղանդավոր արվեստագետը այնքան էր հուզված, որ նա չկարողացավ ավարտել իր երախտագիտական խոսքը և բարձրաձայն արտասվեց... Նրա վարակիչ արտասուքը համակեց բոլորին։

Վեհափառ Հայրապետն ևս խորապես զգացված էր այնքան ջերմորեն արտահայտված զգացմունքներից։ Նա խոսեց նույնպիսի հուզմունքով։ Հաճելի էր միաժամանակ նկատել Վեհափառ Հայրապետի հոգեկան գոհունակությունն իր ժողովրդի տարագիր ցաց տաղանդավոր որդիներից մեկին իր բարձր արվեստը Հայրենիք բերելու և հարազատ ժողովրդին մատուցելու հնարավորությունը տված լինելու առթիվ։ Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետը, ինչպես միշտ, այսօր ևս շեշտեց, որ Ինքը բաջալերում ու սիրում է «իրավ» արվեստը, որը ժողովրդի հոգեկան կարողությանց և մշակութային արժանիքների ճշմարիտ արտահայտությունն է։ Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը Ռ. Պետրոսյանին բարեմաղթեց հաջողություններ իր այնքան սպասված համերգների ընթացքում։

Հարգելի հյուրերը հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից, իրենց իսկ վկայությամբ՝ խորունկ տպավորություններով, անմոռանալի հուշերով լիցքավորված ու հարստացած։

Հաջորդ օրն իսկ, նոյեմբերի 22-ին Երևանում սկսվեց Ռ. Պետրոսյանի փոքրիկոտ համերգների շրջանը, որն ունեցավ արտակարգ հաջողություն։ Տաղանդավոր դաշնակահարը ամենախստապահանջ երաժշտագետներին իսկ հիացրեց իր երաժշտական տաղանդով, կատարողական բարձր արվեստով։ Շատերի համար ամենայն պարզությամբ հասկանալի դարձավ Բելգիայից մինչև Հարավային Ամերիկա, Հնդկաստանից մինչև Հյուսիսային Ամերիկա նրա արձանագրած համերգային հաղթանակների գաղտնիքը։

Կատարողական անթերի վարպետությունը, զարմանալիորեն զգայուն և նուրբ երաժշտականությունը, արվեստը այնպիսի ներդաշնակ մի միասնություն են ստեղծում նրա նվագի մեջ, որ լավագույն դրականն է հանդիսանում նրա համերգների անընդմեջ հաջողության։ Պետրոսյանի նվագը հագեցված է մարդկային ամենանուրբ զգացմունքներով, դյուրազգաց հոգու քնարերգական զեղումներով ու քաղցրությամբ։

Խստապահանջ երաժշտագետների և երաժշտասեր հասարակայնության գնահատությամբ, Պետրոսյանի բազմիցս հանդես գալը Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում՝ մշակութային նշանակալից երևույթ էր։

Նրա համերգները փայլուն հաջողություններ արձանագրեցին նաև Թբիլիսիում։

Ռ. Պետրոսյանը նախքան իր վերադարձը Փարիզ, վերջին անգամ եղավ նորից Վեհափառ Հայրապետի մոտ, ստանալով Նրա օրհնությունը։ Տաղանդավոր դաշնակահարը իջավ նաև Մայր Տաճար, աղոթք ասաց իր պապերի դարավոր խորաններին առաջ ու մեկնեց՝ զորացած իր ժողովրդի և Հայրենիքի սիրով և զգացմունքներով և նախնիքների լույս հավատով։

Բարի ճանապա՞րհ ենք մաղթում սիրելի արվեստագետին և հետագա նորանոր հաջողություններ ցանկանում նրան։

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԹԱԲՅԱՆ